

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Անցեալ շաբաթվերջի Ուրբաթ եւ Շաբաթ օրերը՝ 4 եւ 5 Ապրիլ 2003ին, Պէյրուսի Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ, Լիբանանի թեմի բարեջան առաջնորդ Քեղամ եպս. Խաչերեանի նախագահութեամբ գումարուած Լիբանանի թեմի Ազգային Քառասական Ժողովս, Լիբանանահայութեան ազգային կեանքի բազմաձիւղ գործունէութեանց սպառնչքնմարկուող կատարելէ ետք, մեծ ուրախութեամբ ողջունեց Լիբանանի քաղաքական կեանքին մէջ հետզհետէ աւելի արմատացող Լիբանանեան ազգային համերաշխութեան շինիչ գիտակցութիւնը: Այս առիթով, ժողովը նաեւ համաձայնութիւն կանգ առաւ օրըստօրէ աւելի մտահոգիչ տարողութիւն ստացող Իրաքի դէմ շղթայագերծուած պատերազմին մարդկային, քաղաքակրթական եւ տնտեսական ահաւոր հետեւանքներուն վրայ:

Սարդկութեան, պատմութեան եւ շրջանի ողջ ժողովուրդներու խաղաղ գոյակցութեան սպառնացող օտար ուժերու ներխուժումը դատապարտելով՝ ժողովը ո՛չ միայն խստօրէն դատապարտեց կատարուած ահաւոր կոտորածներն ու քանդումի վայրագ արարքները, այլեւ ընդգծեց իրաքի ժողովուրդին իր սեփական ձակատագիրը ձեռնարկող արդար եւ անվիճելի իրաւունքը:

ՄԱԿի Սարդկային Իրաւանց Ուխտով ճակատակցութեան անսակարկելի սկզբունքներն առաջնորդուած՝ Լիբանանի թեմի Ազգային Քառասական Ժողովս կոչ կ'ուղղէ Իրաք ներխուժած զինեալ կողմերուն՝ վերջ դնելու հարցերը զինու զօրութեամբ լուծելու անմարդկային գործելակերպին եւ այս բարդ հարցին լուծումը հետապնդելու քաղաքակիրթ լայնախոհութեամբ, երկխօսութեան ձամբով, ՄԱԿի շրջանակէն ներս:

ՂԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ
ԳԱՆՈՒԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՄՇԱԿՈՅԹԻ նախարար Ղասսան Սալամէ երէկ ընդունեց Ընկերվար Յատաշրիմական Կուսակցութեան ղեկավար երեսփոխան Ռաշիտ Ժոնայարը, որուն հետ քննարկեց երկրին քաղաքական ընդհանուր կայունութիւնը եւ շրջանային վերջին իրադարձութիւնները:

● ՊԵՏԱԿԱՆ նախարար Ֆուատ Սաատ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Չինաստանի դեսպանը, որուն հետ քննարկեց Իրաքի դէմ ամերիկեւրիտանական պատերազմին առնչուող հարցեր: Սաատ եւ չին դեսպանագետ խստի դատապարտեցին իրաքի ժողովուրդին դէմ գործադրուող բռնարարները:

● ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ եւ առեւտրի նախարար Պասէլ Յիշիան երէկ գլխավորեց ժողով մը, որուն ընթացքին քննարկուեցաւ Լիբանանի եւ Եւրոպական Միութեան անդամ երկիրներու միջեւ առեւտրի պայտ զօտի մը համաձայնագիր կնքելու ծրագիրը:

● ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ընդունեց երեսփոխան Աբրամ Շրիայէպը, որ կը գլխավորէր կենսոլորտի պահպանման միութեան մէկ պատուիրակութիւնը: Հանդիպումին քննարկուեցան կենսոլորտի պահպանման համար Լիբանանի երիտասարդութեան դերակատարութիւնը:

● ԽՈՐՀՐԳԱՅԻՆ Միութեան նախկին նախագահ Միխայիլ Գորբաչով, որ կը գտնուէր Լիբանան, երէկ վերադարձաւ Մոսկուա, աւարտելով Միջին Արեւելքի ներկայ կացութեան մասին իր դասախօսութիւնները եւ հանդիպումներ ունենալէ ետք իշխանութեան երեք պետերուն եւ քաղաքացի ալ պաշտօնատարներու հետ:

● ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ խորհրդարանական յանձնախումբը երէկ տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտիէն յետք պեկուցում մը՝ տեղեկատուութեան մարզին մէջ Լիբանան - Սուրիա գործակցութեան անհրաժեշտութեան, ինչպէս նաեւ պատկերասփիւռի «Թելէ Լիպան» կայանի ապագայի դերակատարութեան մասին:

● ԼԻԲԱՆԱՆԻ մէջ ամերիկեան արտադրութիւնները արգիլող յանձնախումբը երէկ գումարեց ժողով մը, որուն ընթացքին դատապարտեց «Մաքտանըլտ» ճաշարանին պայթումը, որ տեղի ունեցած էր անցեալ շաբաթավերջին, դիտել տալով, որ յանձնախումբին նպատակն է ամրապնդել քաղաքակիրթ միջոցներով ամերիկեան արտադրութեանց դէմ պոլսթրը. առանց խախտելու իրանական ազգային միասնականութիւնն ու երկրին կայունութիւնը: Նշեալ արարքը դատապարտեցին նաեւ նախկին վարչապետ Սելիմ Հըս, արդարութեան նախարար Սամիր Շարը, երեսփոխան Ղասսան Միխայէր, Նալա Մուաուա, Նեպիլ տը Ֆրէյժ եւ ճարտարագէտներու Միութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՍՓԻՒՌԻ ԹԵՄԵՐՈՒՆ ԼՐԻՒ ՊԱՏԿԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՂ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ




Ներկայութեամբ Լիբանանի Տայոց թեմի առաջնորդ Քեղամ եպոս. Խաչերեանի եւ լիբանանահայ կուսակցական, մշակութային, կրթական, մարզական եւ բարեսիրական միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն, երէկ, 7 Ապրիլի երեկոյեան ժամը 6:00ին, Ազգային առաջնորդարանի դահլիճին մէջ փեղի ունեցաւ հանդիպում մը Տայասփանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան դասախոսութիւններէն Ռոմիկ Յովհաննիսեանի հետ:

Քեղամ եպոս. Խաչերեան ներկայացուց հանդիպումին նպատակը՝ Ռոմիկ Յովհաննիսեանի կողմէ իրագործուած Տայասփանեայց Առաքելական թեմերուն եւ հոն գործող կառույցներուն մասին համայնագիրարանի մը դասախոսութիւնը: Ան ըսաւ, թէ աշխարհային ամբողջացման համար փեղեկութիւններ կը հատարուին բոլոր թեմերէն եւ հանդիպումին նպատակն է ներկայացուցիչները ծանօթացնել աշխարհային, որդէպի կարելի ըլլայ Լիբանանի թեմին նուիրուած ամբողջական հասարակ մը լոյս ընծայել:

Ռոմիկ Յովհաննիսեան ըսաւ, թէ նկատի առնուած է 50 հասարակ մագնիսաւոր մը հրապարակութիւնը, որուն առաջին քանի մը թիւերը արդէն լոյս փնտրած են: Տպարարները տիպի բարգձմանուն նաեւ անգլերէնի եւ ռուսերէնի, որդէպի օգտուները եւ կարելիութիւն ունենան ծանօթանալու հայկական կեանքին: Ան ըսաւ, թէ իրաքականիտր հասարակ միջոցով զազոյթին դասախոսութիւնը, համայնքին վիճակը, կրօնական եւ աշխարհիկ կառույցներուն վարչերը բարբէտին վրայ, անոնց փարած գործունէութիւնը, արձանագրած նուաճումները եւ ներկայի դրութիւնը:


Իր փեռակին մէջ այսքան ծառայուն առումով աննախընթաց այս աշխարհայինութիւնը իր վերջնական ձեռնի մէջ շարժաւ տարբեր մը ըլլալ յարկադէս ուսումնասիրողներու համար:



ԳՐԱՏՈՒՆ ՈՍԿԵՂԱՐ

- ★ Ունիմը ձեր փնտրած գիրքերը եւ բառարանները:
- ★ Մանկական գունաւոր գիրքեր, Երգարան եւ Երագահան:
- ★ Չարգացումի միահատոր համայնագիտարաններ՝ Անգլերէն եւ Ֆրանսերէն:

Պուրճ Համուտ, Մուրթ Փրկիչ եկեղեցոյ կից.
Հեռ.: 01/264750
P.O.Box: 11-8877, Beirut, Lebanon
E-mail: vosketar@yahoo.com



ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլին գլխաւոր լուրերը կը շարունակեն մնալ իրաքեան պատերազմին առնչուող իրադարձութիւնները, պատերազմի կողմերէ ուղղուած խաղաղութեան կոչերը եւ պատերազմը մերժող ցոյցերը, որոնք աշխարհը ողորդած են:

Թերթերը նաեւ լուսարձակի տակ առած են պաղեստինեան բռնագրաւելաւ տարածքներուն մէջ շարունակուող իսրայէլեան բռնարարները: Տեղական իրադարձութիւններուն առաջնորդաւորաբար անգլերէն, իսրայէլեան օրաթերթերը գրած են «Մաքտանըլտ» ճաշարանին մէջ տեղի ունեցած պայթումին մասին:

«Նահար» գրած է, թէ ռուսական դիւանագիտական «կարաւան» մը ենթարկուեցաւ յարձակումի, երբ անիկա դուրս կու գար Պաղտատէն, իսկ Ռաշի Մուսկուա մեկնեցաւ անակնկալ կերպով: Պուշ կը մեկնի Պելքասը, իսկ Ռաշի ինկընը կը նախատեսէ, թէ իրաքեան նոր կառավարութեան կազմութիւնը նուազագոյնը 6 ամիս կը պահանջէ:

Ամերիկացիները կը պաշարեն Պաղտատէն եւ կը մտնեն Քարպալա, իսկ բրիտանացիները մուտք կը գործեն Պաղտատի կեդրոնը:

Ըստ թերթին, Ռաշի ինկընը կրթական նոր ծրագիր մը կը մշակէ եւ գիրքեր կը հրատարակէ իրաքեան վարժարաններուն համար: Իրաքի մէջ պիտուորական պատերազմը կը շարունակուի, իսկ քաղաքակրթութեան անհրաժեշտ հետապնդէ նաեւ Սուրիան եւ Իրանը, նշած է օրաթերթը:

«Նահար»-ի համաձայն, Հիւսիսային ծակաւոր ստեղծուեցաւ ամերիկեան օդուծի «սխալ» ոմբակոծումին պատճառով եւ անոր փոքր գնաց Մասուտ Պարպանիի եղբայրը: Քրտական եւ ամերիկեան փորձեր կը կատարուին՝ մօտենալու Քերքուքի նախահորներուն: Անգարա եւ Թեհրան երկուստեքն պիտի կատարեն Դամասկոսի հետ, յայտարարելով, թէ կը մերժեն Իրաքը բաժնելու որեւէ ծրագիր, նշած է օրաթերթը: «Սաֆիր» գրած է, թէ Պաղտատ կը դիւանագրաւէ ամերիկեան պաշարուն մը, իսկ Ռաշի ինկընը կ'ուզէ երկարատեւ բռնագրաւում մը: Փոլ Վոլֆֆից յայտարարեց, որ

Իրաքի մէջ Սուրիոյ խաղը անմիջապէս պետք է վերջ գտնէ, դիտել տալով, որ Սուրիոյ վարչակարգը եւս փոփոխութեան կը կարօտի:

Թերթը նշած է, թէ Իրաքի մէջ հիւանդանոցները օրական հարիւր պարագայ կ'ընդունին: Պաղտատ եւ Թեհրան կը հաստատեն, թէ Պարպալի մէջ գտնուած դիակները կը վերաբերին ուրսունական թուականներուն փոխուած փնտրութիւնը, իսկ Լոնտոն ամբողջովին կը ժխտէ այս պարագան:

Ըստ «Մուսթաքպալ»-ի, բրիտանական ուժերը մտան Պարպալի կեդրոնը, իսկ ամերիկացիները յայտարարեցին, թէ տիրապետած են Քարպալա-ի: Ռուսիոյ դեսպանը առաջնորդող ինքնաշարժներու թափօրը յարձակումներու թիրախ դարձաւ, գրած է օրաթերթը:

Չօրավար Կարնըր Ում Քասրը կ'ընտրէ իր նստավայրը, իսկ Օնցի երկիրները կը վերահաստատեն Սատտամի իշխանութեան հեռացումը պահանջող իրենց կոչերը: Արաքական Լիբանանի պիտի չձանձնայ Ամերիկայի ղեկավարութեամբ Իրաքի նոր կառավարութիւնը, հետեւաբար անիկա շատ հաւանաբար ստեղծելի կ'ընդունուի Իրաքի

անդամակցութիւնը: Ամերիկեան - քրտական միացեալ կարաւան մը ոմբակոծուեցաւ դաշնակցութեան կողմէ, պատճառելով 18 քոն եւ վիրաւորելով Պարպանիի եղբայրն ու անոր պատակը:

«Տիար» գրած է, թէ իրաքեան մայրաքաղաքին մէջ շարդեր կը գործադրուին քաղաքայիններու դէմ: Պաղտատ կը դիմադրէ ամերիկեան եւ բրի-

տանական թշնամի ուժերուն, իսկ Պարպալի կարգ մը մասերը անցան բրիտանական տիրապետութեան տակ: Ամերիկեան ռազմական օդանաւ մը ոմբակոծեց քրտական Փէշմերկա ուժերու ուղղութեամբ, պատճառելով տասնեակներով քոն:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ ամերիկեան օդուծի ոմբակոծումներուն հետեւանքով 4 ամերիկացիներ իւր 18 քիւրտեր սպաննուեցան, իսկ բրիտանական ուժերը յայտարարեցին, որ մտած են Պարպալա: Բռնագրաւող ուժերը հաստատուած են Պաղտատի շրջակայքը, վախճալով թաղային կոնիւնտը: Ռաշի ինկընը յայտարարեց, որ ամերիկեան ուժերու Պաղտատի մէջ ներկայութիւնը երկարատեւ պիտի ըլլայ, իսկ Իրաքի նոր կառավարութիւնը պիտի չյայտարարուի 6 ամիսէն առաջ:

Ըստ թերթին, Ապտալա Կիւլ Դամասկոս պիտի այցելէ յանաքիկայ Շաբաթ:

Պաղտատի նաեւ հարցին մասին «Սաֆիր» գրած է, թէ Այսր-յորդանանի եւ Կապալի մէջ 3 պաղեստինցիներ սպաննուեցան եւ 15 ուրիշներ վիրաւորուեցան, իսկ երկու բանակարաններ քանդուեցան: Պարդուսի օգնականները յայտարարեցին, որ անոր դատավարութիւնը օրինական է:

«Մաքտանըլտ»-ի պայթումին մասին «Սաֆիր» գրած է, թէ նախագահ Լահուտ յայտարարեց, որ բռնարարները դատապարտելու արտայայտութիւնը չի կրնար կատարելի Լիբանանի վրէժնա հասցնելու ճամբով եւ թէ այս արարքէն կ'օգտուին միայն Լիբանանի թշնամիները:

ՉԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ ԿԱՐԵՒՈՐ Է

«Վանայ Չայն»-էն ուղղակի ձայնասփռուող շաբաթական յայտագիրը՝

ՏԵՍԱԿԵՏ

Այսօր՝ Երեքշաբթի, 8 Ապրիլ 2003, կէսօրէ ետք ժամը 5:00ին,

Գիւրը՝


ԱՐԻԵՕՔ ԶԵՆՔ ԿՐԵԱՐ

ԺԵՐԻ ՆԱՅԵՐԷՆ ԽՕՍԻԼ

Կը խօսին՝

ԱՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ԱՐՓԻ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ
ՎԻԳԷՆ ԱՄԱԳԵԱՆ

Յայտագիրին ամբողջ տեւողութեան հեռաձայնեցէք «Վանայ Չայն»՝ 01-267657 եւ 01-241199 թիւերուն եւ տուէք ձեր կարծիքը:



FUEL CARDը գործածեցէք

պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւրը փոխելու կամ գանձելու լուրջ պարագային:

Երբ մագուրս պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Համուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Բրետի Լիպան»-ի մօտ
- ▶ SPEED - Հանքաշ, Կալէրի Իթթիհատ
- ▶ ՀԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմագ»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց

- ▶ MALLAH - Հորալ Ղաուարնէ
- ▶ MALLAH - ժայ Էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ եկեղեցոյ մօտ
- ▶ SAAD - Մար Սիայէլ
- ▶ SPEED - Նահր, «Փեօօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պալալէր

ՐԱՅ ԴԱՏ

ՐԱՅ ԴԱՏ

ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐ Կ'ԱՌԱՋԱՐԿԵՆ ՆՈՒԱԶԵՑՆԵԼ ԹՈՒՐՔԻՈՅ ԽՈՍՏԱՅՈՒԱԾ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու ներկայացուցիչներու Տան միջազգային յարաբերութեանց յանձնախումբի երկու անդամներ՝ Հենրի Հայտ եւ Թոմ Լանթոս Մարտ 31ին առաջարկեցին նախագահ ձորձ Պուլի կողմէ Թուրքիոյ խոստացուած 1 միլիառ տոլարի օժանդակութեան գումարը:

Անոնք այս նպատակով նամակ մը յղեցին յատկացումներու յանձնախումբին՝ առանց նշելու, թէ որքանով կ'ուզեն նուազեցնել օժանդակութիւնը:

Երկու քոնկրետականները նամակին մէջ ընդգծեցին, որ Թուրքիոյ կեցուածքը «յատկանշական եւ արդարանալի կերպով» նեղացուցած է Քոնկրէսը՝ Թուրքիոյ յաւելեալ օժանդակութեան որեւէ առաջարկի պաշտպանութիւնը դժուարացնելով:

Թուրքիոյ կառավարութիւնը կը յուսար 6 միլիառ տոլարի նպաստ մը ստանալ, սակայն այդ յոյսերը ի դերեւ ելան, երբ խորհրդարանը մերժեց ամերիկացի զինուորներու տեղակայման առաջարկը:

Ապրիլ 1ին յատկացումներու յանձնախումբը սկսեալ քննել Պուլի առաջարկը եւ մերժեց Թուրքիոյ խոստացուած օժանդակութիւնը միանգամընդմիջ տընջելու առաջարկ մը:

Քալիֆորնիայէն հանրապետական ներկայացուցիչ Ռենտի Քանինկոն մտաւորակեց Թուրքիոյ օժանդակութիւնը ամբողջութեամբ ընջել թղթածրարէն, յայտնելով. «Երբ իմ զանգուածները դիտարկեցին կերպով սխալ քայլեր կ'առնեն, վերջին բանը, որուն մասին կը մտածեմ, անոնց յաւելեալ գումարներ տալն է»:

ԱԶԵՐԻՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԲՈՂՈՔԻ ՅՈՅՅԵՐԸ

«Էստիլիթ Փրէս» լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ, թէ «Ղարաբաղի Ազատագրութեան կազմակերպութեան» մօտաւորապէս հարիւր զօրակիցներ Պաքուի մէջ ցոյց մը կազմակերպած են՝ բողոքելով Լեռնային Ղարաբաղի «հայկական բռնագրաւումին» դէմ: Գործակալութեան համաձայն, ցուցարարները ծրարած են քայլարշաւ մը կազմակերպել դէպի նախագահի վարչակազմին շէնքը եւ ՄԱԿի գրասենեակը: Հաղորդումին համաձայն, ցուցարարներէն պահանջուած է ցրուել, որովհետեւ անոնք ցոյց կազմակերպելու իրաւունք չունենին: Սակայն ցուցարարները մերժած են ցրուել եւ այդ պատճառով ոստիկանութեան հետ բախումներ արձանագրուած են, ինչպէս նաեւ ութ հոգի ձերբակալուած է: «Ղարաբաղի Ազատագրութեան կազմակերպութիւն»ը աւելի ուշ հաղորդած է, թէ ձերբակալուածներէն երեքը ազատ արձակուած են:

ԻՍԱ ՔԱՄՊՈՒՐ՝ ՀԱՅԵՐՈՒՆ ՕԺԱՆԴԱԿՈՒՆ...

Միւս կողմէ, ազրպէյճանական «Էյ. Էն. Էս» լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ, թէ Մուսախի Մուսաւաթ կուսակցութեան անդամները բողոքի ցոյց մը կազմակերպած են Մուսաւաթ կուսակցութեան շէնքին դիմաց՝ անոր ղեկավար Իսա Քամպուրը ամբաստանելով Լեռնային Ղարաբաղի «բռնագրութեան» համար հայերուն առիթ տուած ըլլալու լայն ցանցով: Ցուցարարները դիտել տուած են, որ Քամպուր Ազրպէյճանի խորհրդարանի նախագահ եղած օրերուն (Ապրիլ 1993) կազմակերպած է հայերու կողմէ Քերթաշի «բռնագրութեան» Անոնք պնդած են, որ Քամպուր կը շարունակէ իր ոճրային արարքները, եւ պահանջած են, որ Մուսաւաթ կուսակցութիւնը փակուի:

ՐԱՏ «ԿԻՐԸ»Ի

ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ՄԷՋ ՅԱՃԱԽԱԿԻ ԴԱՐՁԱԾ ԵՆ ՀԱԿԱՀԱՅ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ

«Վիրք» հասարակական կազմակերպութիւնը վերջերս յայտարարութիւն մը հրատարակած է վրացական «Սփոյտնայա Ռուզիա» թերթի Մարտ 19-21ի թիւին մէջ լրագրող Պոնտո Արվելաձէի ստորագրութեամբ «Վրաստանը այլեւս սխալելու իրաւունք չունի» խորագրով յօդուածին վերաբերեալ: Յայտարարութեան մէջ կ'ըսուի, թէ հայերու եւ վրացիներու բարեկամութեան անուսով խօսող յօդուածագիրը իրականութեան մէջ բացայայտօրէն հայ - վրացական հակամարտութիւն կը սերմանէ: Կազմակերպութիւնը գիտել տուած է, թէ «պատմական ճշմարտութեան» անուսով խօսող լրագրողը իրականութեան մէջ կը զբաղի Վրաստանի մէջ հակահայ ազգայնամոլական քարոզչութեամբ:

«Վիրք» նշած է, թէ վրացական մամուլին մէջ յաճախակի դարձած են հակահայ յօդուածներ, որոնք իրականութեան չեն համապատասխաներ: Կազմակերպութիւնը աւելցուցած է, թէ յօդուածներուն ընդհանրապէս կը յարկեցն հակահայ «գործնական» քայլեր, որոնք կը հրահրուին յատուկ ուժերու կողմէ:

ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԺԵՍԹԵՐ, ԹԷ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Իրաքի դէմ պատերազմի ծաւալման գուցահեռ, Թուրքիա Հայաստանի նկատմամբ իր նախորդ՝ բացայայտօրէն թշնամական դիրքորոշումները վերանայելու նախանշաններ ցոյց կուտայ: Ասոր վկայութիւնն է, օրինակ, նախագահ Ահմէթ Սեզէրի շնորհաւորական ուղերձը Ռուպէրթ Քոչարեանին՝ Հայաստանի նախագահ վերընտրուելու կապակցութեամբ, ինչպէս նաեւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատար էրթան Թեզէօրի աւելի ընդարձակ յայտարարութիւնը, որ փաստօրէն Ահմէթ Սեզէրի ուղերձին իւրայատուկ «բացատրական»ն է:

Թուրքիոյ ներկայ դիւանագիտական ժեսթերը միանգամայն հասկնալի են՝ իրեւ իրաքեան պատերազմին պատճառով մեր շրջանին մէջ եւ անոր շուրջը ստեղծուող աշխարհաքաղաքական կացութեանն ընդդէմ: Թուրքեւամերիկեան յարաբերութիւններու վատթարացումը, իրաքի հիւսիսը գոյութիւն ունեցող քրտական ինքնավարութեան ճակատագրի հարցը, Թուրքիոյ ղեկավարութեան նորէն կը յիշեցնէ սեփական ազգային առածը այն մասին, որ աշխարհի մէջ Թուրքի բարեկամ միայն ինքը՝ Թուրքն է:

Հակառակ այն իրողութեան, որ Թուրքիա յաջողութեամբ վատթարացուցած է իր յարաբերութիւնները Եւրոպայի, Ռուսիոյ եւ իր դրացի իսլամական երկիրներուն հետ՝ յանուս Միացեալ Նահանգներու հետ բարեկամութեան, բայց Միացեալ Նահանգներ կը ձեռնարկեն այնպիսի քայլեր, որոնք կը տանին դէպի անցեալ դարասկիզբին «Եւրոպայի համաձայնութեան» կողմէ իրագործուած Թուրքիոյ բաժանման գործընթացի նոր հանգրուան: Յայտնի է, որ քրտական օճախի ձեւաւորումը կը հանդիսանար Համաշխարհային Ա. Պատերազմին ետք ստորագրուած Սեւրի դաշնագրի բաղկացուցիչ մէկ մասը, որ ձախողեցաւ միայն խորհրդային Ռուսիոյ կողմէ Թուրքիոյ ցոյց տրուած աջակցութեան շնորհիւ: Այդ պատճառով Թուրքիա ինկուս ներկայ երկու կողմերու մէջ՝ Արեւմուտքի մէջ դառնալով եւրոպական տիպի պետութիւն, իսկ Արեւելքի մէջ՝ Հայկական Յեղասպանութիւնը իրականացուցած եւ ջերտորէն շարժումը ճնշող արեւելեան բռնապետութիւն:

Ներկայիս Թուրքիան կը գիտակցի, որ Իրաքի մէջ Միացեալ Նահանգներու հաստատման պատճառով վերջ պիտի գտնէ այս երկու կողմերը, որովհետեւ ինչպիսի քաղաքական կարգադիմակ ալ ունենայ Քիւրտիստանը իրաքի կազմին մէջ, բայց՝ փաստօրէն Միացեալ Նահանգներու վերահսկողութեան տակ, միեւնոյնն է, ան պիտի դառնայ Սեւրի դաշնագրի մը ամբողջութեամբ «քրտական օճախ», ուրեմն նաեւ ապագայ անկախ Քիւրտիստանի հիմնաքարը: Բայց քրտիկային յայտնի է նաեւ, որ Սեւրի դաշնագրի կը նախատեսէր ժամանակակից Թուրքիոյ արեւելեան հատուածի բաժանումը հիւսիսային՝ հայկական եւ հարաւային՝ քրտական բաժիններու: Եւ ի տարբերութիւն տակաւին ոչ ոքի կողմէ չճանչցուած Քիւրտիստանի, Հայաստան այսօր անկախ պետութիւն է, որ թէեւ տարածքային պահանջ չէ դրուած Թուրքիոյ առջեւ, բայց կը շարունակէ հետապնդել Հայկական Յեղասպանութեան ճանաչման գործը, այսինքն՝ իրական հիմքեր ստեղծել այդ Յեղասպանութեան հետեւանքներուն վերացման համար:

Քրտական հարցի եւ Հայկական հարցի վերաբառման սպառնալիքի գոյութեան պայմաններուն մէջ Թուրքիա հարկադրաբար կը մտածէ իր միակողմանիօրէն ամերիկամէտ քաղաքականութեան վերանայման մասին՝ սկսելով լայն դիւանագիտական զօրաշարժեր մէկ անգամէն քանի մը ուղղութիւններով: Այդ ուղղութիւնները հետեւեալներն են.

ա.- Միացեալ Նահանգներուն ուղղուած պահանջները՝ իրաքի տարածքային ամբողջականութեան պահպանման անհրաժեշտութեան մասին,

բ.- Եւրոպական Միութեան ուղղուող պահանջները՝ իր անգամակցութեան հարցին շուտափոյթ լուծման համար,

գ.- Ռուսիոյ ուղղուող բարեկամական «ազդանշաններ»ը, եւ համագործակցութեան պատրաստակամութեան

ցուցադրութիւնը:

Վերջին երկու հարթութիւններուն, մանաւանդ ուսու - թրքական գործակցութեան միջոցով Թուրքիա յոյսեր կը փայփայէ կարգի դնել նաեւ հայ - թրքական յարաբերութիւնները:

Ունենալով մեծ պետութիւններուն միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնները սեփական ազգային շահերուն ծառայեցնելու մեծագոյն փորձ՝ Թուրքիա այսօրու ինչպէս կը ձգտի օգտուել Անդրկովկասի եւ առաջաւոր Ասիոյ մէջ մէկ կողմէ Միացեալ Նահանգներու ու Եւրոպական Միութեան եւ, միւս կողմէ, Միացեալ Նահանգներու ու Ռուսիոյ շահերուն միջեւ նկատուող հակասութիւններէն: Այսպիսի պայմաններուն մէջ ուղղակիօրէն «բարեկամութեան» ժեսթերու, ինչպէս նաեւ միջնորդաւորուած ձեւով՝ ուսու - թրքական շահախնդրութեան դաշտ ստեղծելու միջոցով Թուրքիա պիտի փորձէ ներազդել Հայաստանի վրայ:

Յանուն այդ նպատակին ան պատրաստ պիտի ըլլայ անտեսել նոյնիսկ խանդի այն սեսարանները, որոնք յառաջ կու գան Ազրպէյճանի մէջ՝ Հայաստանի հետ Թուրքիոյ ունեցած որեւէ շփումէ ետք: Հայաստանը՝ իրեւ շրջանին մէջ Մոսկուայի գլխաւոր յեկուկէտ, այսպիսի խորի մը մէջ աւելի կարեւոր է Թուրքիոյ համար, քան՝ Վրաստանն ու Ազրպէյճանը միասին առած: Այդ պատճառով Թուրքիա անկասկած աշխատանքներ պիտի ծաւալէ նաեւ Մոսկուայի մէջ՝ ձգտելով վերջինիս միջոցով «յեզու գտնել» Հայաստանի հետ եւ ատով իսկ չէզոքացնել Քրտական հարցի վերաբառման գուցահեռ՝ նաեւ Հայկական հարցի վերաբացման հեռանկարները:

Այսպիսի ցանկութեան մը գոյութեան մասին կը խօսի Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան աշխատակից էրթան Թեզէօրի այժմու յիշեցումը այն մասին, որ Հայաստանը չ'ուզէր ճանչնալ 1921 թուականի Թուրքեւխորհրդային համաձայնագիրը, որ, ինչպէս գիտենք, յայտնի է Լենին - Աթաթուրք դաշնագրի անուսով: Յայտնի է, որ նոյնիսկ այդ համաձայնագիրով չէզոքացուցեցան Սեւրի դաշնագիրը Թուրքիոյ պարտադրելու «Եւրոպայի համաձայնութեան» վերջին փորձերը: Ուրեմն, Հայաստանին յիշեցնելով ուսու - թրքական գործակցութեան շրջափոխման մէջ իր ստանձնած պարտաւորութիւններուն մասին՝ Թուրքիա կ'ուզէ «բարեկամութեան» միջոցով ամբողջով Հայաստանի բաժանման փաստը՝ օգտուելով իրաքեան պատերազմի հետ առընչուող ուսու - ամերիկեան յարաբերութիւններուն մէջ յառաջացած ժամանակաւոր դժուարութիւններէն:

Թուրքիոյ համար անհրաժեշտ է ուսու - ամերիկեան յարաբերութիւններու հետագայ վատթարացում, որպէսզի կարենայ հակակռել Թուրք - ամերիկեան յարաբերութիւններուն մէջ նկատուող դժուարութիւնները՝ չէզոքացնելով Քրտական հարցը եւ «բարեկամաբար» պայմաններ թելադրելով Հայաստանի: Նոյնն է կացութիւնը նաեւ Թուրքիա - Եւրոպայ - Հայաստան եռանկիւնի վրայ, ուր նոյնպէս Թուրքիա պիտի փորձէ ստեղծել ամերիկեան հաւանական ճնշումներուն հակազդելու որոշակի դաշտ մը:

Սակայն ամբողջ խնդիրը այն է, որ ներկայիս ուսու - ամերիկեան եւ Միացեալ Նահանգներ - Եւրոպական Միութիւն յարաբերութիւններուն մէջ նկատուող տարակարծութիւնները, որոնց վրայ կը փորձէ խաղալ թրքական դիւանագիտութիւնը, ամենեւին անլուծելի հակադրութեան ընդթ չունին, ուրեմն՝ անխուսափելի է Քրտական հարցի վերաբառմանը, որմէ ետք իրական կը դառայ նաեւ Միացեալ Նահանգներու կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման հեռանկարը:

ԳԵՈՐԳ ԽՈՒԳԻՆԵԱՆ

(Արեւմտահայերէտի վերածուած)
«Հայոց Աշխարհ»

«ԱԶԳԱԿ»Ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»Ի ԳԵՏԱԿԱՊԵՆՈՒ
ՏԱՄԱՐ ԴԵՏԱԿԱՊԵՆՈՒ
ԳԵՏԱԿԱՊԵՆՈՒ
258526, 260115 եւ 241274:

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՔՆՆԱՐԿՈՒԻ ԾԱՓՈՆԻ ՄԷՋ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԸ ԸՆԹԱՑՔԻՆ

Ճափոնի Հիրոշիմա քաղաքին մէջ Մարտ 23ին տեղի ունեցաւ միջազգային խորհրդաժողով մը՝ նուիրուած Յեղասպանութիւններու համեմատական քնննութեան միջոցով ընդհանուր եզրերու հասնելու հարցին: Հրաւիրուած էին Գերմանիայէն, Միացեալ Նահանգներէն, Ճափոնէն, Աւստրալիայէն, Չուիցերիայէն, Ինտոնեզիայէն եւ Բրիտանիայէն գիտնականներ: Քննարկուող Յեղասպանութիւններու շարքին համեմատութեան գրուեցան հայկական, ուսուստական, Քամպուրիոյ Յեղասպանութիւնները, Արեւելեան Թիմորի, Ինտոնեզիոյ, կեղոնական Սուտանի, Աւստրալիոյ բնիկներու ջարդերու պարագաները: Յատուկ ուշադրութեան արժանացած է Ռաֆայէլ Լեմբինի աշխատանքը՝ «Յեղասպանութիւն» եզրի մեկնաբանութեան եւ ՄԱԿի համապատասխան օրէնքի ընդունման առումով: Տակաւին անտիպ իր ինքնակենսագրութեան մէջ Լեմբին ընդգծած է, թէ իր վրայ մեծ ազդեցութիւն գործած է ցարդ անպատիժ մնացող Հայկական Յեղասպանութիւնը:

Հրաւիրուած գիտնականներու շարքին եղած է նաեւ փրոֆ. Վահագն Տատրեան, որուն ներկայացուցած ուսումնասիրութիւնը կրած է «Ուրուագիծը 20րդ դարու Յեղասպանութիւններուն Հայկական, հրեական եւ ուսուստական օրինակները»: Տատրեան ներկայացուցած է նշեալ Յեղասպանութիւններուն հասարակ յայտարարներն ու սարքերութիւնները: Վահագն Տատրեանի ելոյթէն ետք ներկաները միաձայն քուէարկութեամբ որոշած են անոր վերլուծութիւնը իրեւ հիմք ընդունելի 20րդ դարու միւս Յեղասպանութիւններու համեմատութեան համար: Տատրեան նաեւ ընտրուած է Հիրոշիմայի համալսարանի դահլիճին մէջ կայացած այդ խորհրդաժողովին նախագահը:

ԲԱՐՍԵՂԵԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԿԸ ՆԿԱՏԷ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ

Հայկական Յեղասպանութեան թանգարանի տնօրէն Լաւրենտի Բարսեղեան յայտարարեց, թէ օսմանեան Թուրքիոյ կողմէ գործադրուած Հայկական Յեղասպանութիւնը արդէն դատապարտած եւ ճանչցած են շուրջ 12 երկիրներու խորհրդարաններ, Միացեալ Նահանգներու 50 նահանգներէն 32ը եւ Իտալիոյ 36 քաղաքապետարաններ:

Բարսեղեանի դիտել տուաւ, որ Յեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը միջազգային ընտանիքին կողմէ անհրաժեշտ է ոչ միայն հայ ժողովուրդին, այլեւ մարդը մարդկութեան համար, հետագային նման ոճիրներ կանխարգիլելու նկատառումով: Ան նշեց, որ վերջին երկու տարիներուն ընթացքին, յատկապէս՝ երբ Միացեալ Նահանգներու Քոնկրէսը 2000ին օրակարգէն դուրս հանեց Յեղասպանութեան թանաձեւը, Թուրքիոյ ղեկավարութիւնը Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան հետ մշակեց նոր ռազմավարութիւն, որուն պատճառով շարք մը երկիրներու մէջ Յեղասպանութեան ճանաչման գործընթացը սառեցուցեցաւ: Ան ըսաւ, որ «Հայ-թրքական հաշտութեան յանձնաժողով»ին պատճառով Հայկական Յեղասպանութեան հարցը դուրս բերուած էր նաեւ Գերմանիոյ խորհրդարանի օրակարգէն:

Բարսեղեանի կարծիքով, հայ ժողովուրդին համար յաւելալ կարեւորութիւն կը ներկայացնեն Անգլիոյ, Աւստրիոյ եւ Գերմանիոյ կեցուածքները, որովհետեւ այդ երկիրները մասնակցած են Ա. Աշխարհամարտին, եւ փաստօրէն անոնք ակնատես եղած են Յեղասպանութեան: Հայ ժողովուրդը, ընդգծեց Բարսեղեան, չի կրնար լուռ անցնիլ Յեղասպանութեան վրայէն, որովհետեւ ոճիրէն 87 տարի անց «այդ յիշողութիւնը չէ դադարած գոյութիւն ունենալէ, քանի որ ան կ'ապրի իւրաքանչիւր հայու մէջ»:

ՇՈՒԷՏԻ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԵՄԻՆԱՐ

Շուէտի վարչապետ Եորան Փերսոնի հովանաւորութեամբ եւ «Կենդանի պատմութիւն» անունով պետական հաստատութեան նախաձեռնութեամբ, Մարտ 26ին Ուփսալայի համալսարանի մասնավարժական բաժանմունքին մէջ տեղի ունեցած է Հայկական Յեղասպանութեան նուիրուած սեմինար: Մօտաւորապէս 9 ժամ տեւած սեմինարին ընթացքին ելոյթ ունեցած է իրաւագէտ Օվէ Պրինկ, որ խօսած է ՄԱԿի Յեղասպանութեան Ռուսիոյ մասին:

Սեմինարին ընթացքին ելոյթ ունեցած է նաեւ պատմաբան փրոֆ. Քլաստորան Քարլսոն, որ հեղինակն է «Արարատէն մինչեւ Լեռնային Ղարաբաղ» խորագրով պատմական-ուսումնասիրական գործին: Ան աւելի քան 100 ունկնդիրներու ներկայացուցած է Հայկական Յեղասպանութեան մասին վերլուծական մը:

Փրոֆ. Տէյվիտ Քոուլը իր կարգին խօսած է նոյն ժամանակաշրջանին Թուրքերուն կողմէ ատրիներու եւ քրիստոնեայ յայ փոքրամասնութիւններու դէմ

Միջապալին Քաղաքական Կեանք

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ «ՏԿԱՐԱՑՈՒԱԾ» ԻՒՐԱՆԻՈՄ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀՐԹԻՌՆԵՐՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ «ԱՊՕՐԻՆԻ» Է

Իրաքի մէջ բրիտանական եւ ամերիկեան դաշնակից ուժերը «տկարացուած» իւրացիում պարունակող հրթիռներ կ'օգտագործեն, այդպիսով զիտուժնաւոր ձեւով անտեսելով ՄԱԿի այն որոշումը, որ կորիզային զէնքերը կը համարէ զանգուածային կործանման ապօրինի զէնքեր:

«Տկարացուած» իւրացիումի ծրագրի փենթակոնի նախկին պատասխանատու, ձէջարկիչ համալսարանի կենսոլորտային գիտութեան նախկին դասախօս եւ Իրաքի առաջին պատերազմէն ետք պատերազմի վարերը իւրացիումէն մաքրելու համար Իրաք գործուողուած ամերիկեան ռանակի զննարկներ փրոֆ. Տակ Ռոքիի համաձայն, «տկարացուած» իւրացիումի օգտագործումը «պատերազմի ոճիր» մըն է:

Ռոքի նշեց, թէ՛ «բարոյական կէտ մը կայ, որ պէտք է նշուի հոս: Պատերազմը կը մղուի, որովհետեւ Իրաք զանգուածային կործանման ապօրինի զէնքեր ունի: Սակայն մենք ալ կ'օգտագործենք այդպիսի զէնքեր»:

Ներկայի տագնապին ընթացքին «տկարացուած» իւրացիում պարունակող հրթիռ օգտագործուեցաւ նաեւ Ուրբաթ, 28 Մարտին, երբ ամերիկեան «ԷՋ-10» օդանաւ մը հրթիռ արձակեց սխալ ուղղութեամբ՝ սպաննելով բրիտանացի զինուոր մը եւ վիրաւորեց երեք ուրիշներ:

ՄԱԿի ենթադրանքները 2002ի տեղեկագրի շնորհիւ, «տկարացուած» իւրացիում պարունակող հրթիռներուն օգտագործումը արգիլող տաննակ մը օրէնքներ ընդունուած են, ներառեալ՝ Մարդկային իրաւանց համաշխարհային յայտարարագիրը, ՄԱԿի Պայմանագիրը, Յեղասպանութեան պայմանագրութիւնը, Չարչարանքի դէմ պայմանագրութիւնը, Ժընեւի 1949ի զորս պայմանագրութիւնները, Աւանդական զէնքերու 1980ի պայմանագրութիւնը եւ Լա Չէյի 1899ի եւ 1907ի պայմանագրութիւնները, որոնք մասնաւորաբար կ'արգիլեն օգտագործումը «թոյնի կամ թունաւոր զէնքերու»: Ինչոր այս օրէնքները կը նպատակադրեն խնայել քաղաքայինները աննախատեսելի տառապանքէ, որիէ զինեալ տագնապի ընթացքին:

«Տկարացուած» իւրացիումի կը վերագրուի Մոցի պատերազմին «հիւանդութիւնը», որմէ կը տառապին 1991ի պատերազմի մասնակցած 200 հազար ամերիկացի զինուորներ՝ մկանային եւ յօդային ցաւերով, գերյոզնութեան եւ յիշողութեան կորուստով: Անոր կը վերագրուի նաեւ Մոցի առաջին պատերազմէն



ետք «Իրաքի մէջ ի ծնէ թերութիւններու եւ քաղցկեղի պարագաներու յաւելումը»: «Քաղցկեղի պարագաներուն թիւը բարձրացած է եթէն տաս անգամով, իսկ ի ծնէ թերութիւնները՝ չորսէն վեց անգամով», ըստ ՄԱԿի ենթադրանքներուն:

Փենթակոն ընդունած է, որ Մոցի առաջին պատերազմէն ետք 320 թոն «տկարացուած» իւրացիում գործածուած է պատերազմի դաշտերուն վրայ, հակառակ անոր որ ռուս զինուորական մասնագէտները կ'ըսեն, թէ հազար թոնը աւելի ճշգրիտ պատկեր մըն է:

1991ին դաշնակիցները 944 հազար հրթիռ կամ 2700 թոն «տկարացուած» իւրացիում պարունակող ռուսներ արձակեցին: Բրիտանական հիւլէական ուժանիւթի իշխանութիւններուն տեղեկագրիին համաձայն, շուրջ 500 հազար մարդ պիտի մահանայ մինչեւ այդ դարուն աւարտը՝ անապատին մէջ ձգուած շողալարակ նիւթերուն պատճառով:

«Տկարացուած» իւրացիումի օգտագործումը նաեւ ի ծնէ թերութիւններ պատճառած է դաշնակից ուժերու վեթերաններուն երեխաներուն մօտ, ինչպէս նաեւ անիկա հիմնական պատճառը կը համարուի «առանց աչքի ծնող մանուկներուն մտահոգիչ թիւին», Իրաքի մէջ:

Աշխարհի մէջ 50 միլիոնէն մէկը կը ծնի այդ թերութեամբ, սակայն Պաղտատի հիւանդանոցներէն մէկը ութ ծնունդներ արձանագրեց միայն երկու տարուան մէջ: Մոցի երեխաներէն եթէ թիւն հայրերը ենթակայ եղած են «տկարացուած» իւրացիում պարունակող հակահրատարակիչ հրթիռներուն, 1991ին Իրաքի պատերազմին Իրաքի մէջ նաեւ արձանագրուած են ծնունդներ՝ առանց գանի «կափարիչ»ին, թերութիւն մը, որ նաեւ կը կապուի «տկարացուած» իւրացիում պարունակող հրթիռներուն:

Մոցի պատերազմին մասնակցած վեթերաններուն վրայ կատարուած ուսումնասիրութիւն մը ցոյց տուաւ, որ անոնց 67 տոկոսը ունէին լուրջ թերութիւններէ տառապող երեխաներ, ինչպէս՝ առանց աչքի, արեան հիւանդութիւններ շնչառութեան հարցեր եւ միաձուլուած մատներ ունեցող մանուկներ:

Ռոքի «Մանտէյ Հերլոյտ»ին ըսաւ, թէ «պետութեան մը զինուորական պատասխանատուները իրաւունք չունին ապականելու ուրիշ երկիր մը, վնաս հասցնելու մարդոց եւ կենսոլորտին եւ յետոյ անտեսելու իրենց արարքներուն հետեւանքները: Այդ մէկը մարդկութեան դէմ ոճիր է»:

Ան Միացեալ Նահանգներն ու Բրիտանիան հրաւիրեց «ճանչնալու իրենց արարքներուն անբարոյ հետեւանքները եւ պատասխանատուութիւն վերցնելու թշկական օգնութիւն տրամադրելու եւ կենսոլորտային ամբողջական մաքրագործում կատարելու»:

Ան աւելցուց, թէ՛ «մենք չենք կրնար օգտագործել զինամթերք, որ թունաւոր աղբանոց կը ձգէ իր ետին եւ կը սպաննէ առանց խտրութեան»: «Այդ մէկը հաւասար է պատերազմի ոճիրի», նշեց Ռոքի:

Ռոքի զիտել տուաւ, որ ներկայիս Մոցի մէջ պատերազմող համադաշնակցութեան ուժերը կը պատերազմին առանց «տկարացուած» իւրացիումի ապականութեան դէմ պէտք եղած շնչառական պաշտպանութիւնը ունենալու:

«ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԿՐՆԱՐ ԱԻԵԼԻ ՊԱՀԱՆՋԿՈՏ ԸԼԼԱԼ»

ԿՐ ՊԵՆՏԱՆ ԱՐԵՄՈՒՏՔՅԻ ԿԵՐԼՈՒԾԱԲԱՆՆԵՐ, ԶԱՐՍԱՑԱԾ՝ ՇԱԿԱԻՐԱԲԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՆԵՐԳՐԱՌՈՒՄՈՎ

Պաքու ամբողջական գորակցութիւն յայտնեց Իրաքի դէմ առանց ՄԱԿի արտօնութեան ամերիկացիներուն սկսած պատերազմին: Ազրպէյճան զարձաւ Ուաշինկթընի կողմէ ղեկավարուող դաշնակցութեան անդամ 30 պետութիւններէն մէկը: Այսպիսով, կարելի է ըսել, որ Ազրպէյճան Իրաքի դէմ պատերազմի մէջ է: Առայժմ միաւորուած մէջ անոր մասնակցութիւնը սահմանափակուած է բրիտանական եւ ամերիկեան օդուժին տարածք տրամադրելով: Պաքուի լրատուամիջոցներու հաստատումով, կը պատահին օրեր, երբ «Պինա» օդակայանին մէջ էջը կը կատարեն աւելի քան 10 «Հերթիւլիս» տիպի օդանաւեր:



Դաշնակից ուժերուն մէջ Ազրպէյճանի նման երկիրներու ներգրաւումը զարմանք կը պատճառէ արեւմտեան երկիրներու շատ մը հասարակական գործիչներուն: Օրինակի համար, Վիեննայի մէջ գործող մամուլի միջազգային հիմնարկի տնօրէն Եոհան Ֆրից վերջերս յայտարարութիւն մը կատարած է, որուն մէջ կոչ ըրած է հրաժարիլ ժողովրդավարութեան չափանիշները ստանահարող երկիրներու հետ գործակցելէ: «Դաշնակցութեան մէջ յայտնուած շատ մը պետութիւններու կառավարութիւններ հնարաւոր ընդունելով Իրաքի դէմ մասնաւորաբար նշած Ազրպէյճանը, Եթովպիան, Քոլումբիան եւ Ուզպեքիստանը: Երբ Միացեալ Նահանգները եւ Բրիտանիան կը խոստանան ժողովրդավարութիւն հաստատել յետպատերազմեան Իրաքի մէջ, բռնատիրական պետութիւններուն հետ Ուաշինկթընի եւ Լոնտոնի համագործակցութիւնը պատճառէ, շարունակած է ան:

Պաքու ամբողջական գորակցութիւն յայտնեց Իրաքի դէմ առանց ՄԱԿի արտօնութեան ամերիկացիներուն սկսած պատերազմին: Ազրպէյճան զարձաւ Ուաշինկթընի կողմէ ղեկավարուող դաշնակցութեան անդամ 30 պետութիւններէն մէկը: Այսպիսով, կարելի է ըսել, որ Ազրպէյճան Իրաքի դէմ պատերազմի մէջ է: Առայժմ միաւորուած մէջ անոր մասնակցութիւնը սահմանափակուած է բրիտանական եւ ամերիկեան օդուժին տարածք տրամադրելով: Պաքուի լրատուամիջոցներու հաստատումով, կը պատահին օրեր, երբ «Պինա» օդակայանին մէջ էջը կը կատարեն աւելի քան 10 «Հերթիւլիս» տիպի օդանաւեր:

Դաշնակից ուժերուն մէջ Ազրպէյճանի նման երկիրներու ներգրաւումը զարմանք կը պատճառէ արեւմտեան երկիրներու շատ մը հասարակական գործիչներուն: Օրինակի համար, Վիեննայի մէջ գործող մամուլի միջազգային հիմնարկի տնօրէն Եոհան Ֆրից վերջերս յայտարարութիւն մը կատարած է, որուն մէջ կոչ ըրած է հրաժարիլ ժողովրդավարութեան չափանիշները ստանահարող երկիրներու հետ գործակցելէ: «Դաշնակցութեան մէջ յայտնուած շատ մը պետութիւններու կառավարութիւններ հնարաւոր ընդունելով Իրաքի դէմ մասնաւորաբար նշած Ազրպէյճանը, Եթովպիան, Քոլումբիան եւ Ուզպեքիստանը: Երբ Միացեալ Նահանգները եւ Բրիտանիան կը խոստանան ժողովրդավարութիւն հաստատել յետպատերազմեան Իրաքի մէջ, բռնատիրական պետութիւններուն հետ Ուաշինկթընի եւ Լոնտոնի համագործակցութիւնը պատճառէ, շարունակած է ան:

